
Վ. ՏԵՐՅԱՆԻ «ԵՐԿԻՐ ԼԱԻՐԻ» ՇԱՐՔԻ ՔՐԻՍՏՈՆԵԱ -
ՀԵԹԱՆՈՍԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՆԻՇՆԵՐԸ

ՄԱՐԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ

Վահան Տերյանի «Լաիրի» խորհրդանիշը հայոց գրականության մեջ, մշակույթում հայտնապես հայրենիքի, սակայն, ըստ էության, մարդու, աշխարհի նոր տեսություն, նոր գեղագիտություն էր. միաժամանակ «Երկիր Լաիրի» շարքը օրգանական շարունակությունն է բանաստեղծի մյուս շարքերի, բայց և մասը տերյանական մարդերգության¹:

«Մթնշաղի անուրջներից» սկիզբ առած Տերյանի գեղարվեստական անձնակա-նության ինքնաճանաչման, սեփական հոգու և ոգու կենսաբար-աստվածային հրի, հրեղեն ակունքի որոնումը, Լույսի ձգտումը «հասցնում» են Լաիրի՝ Հրո երկիր, և բանաստեղծը հաստատում է Լաիրին որպես սեփական հոգու հրե աղբյուր-ակունք. ասել է՝ Հուր-Լույս-Մեր=Լաիրի²: Ըստ այդմ, «Լաիրի» խորհրդանիշը «հուր» է, «արև», «լույս», «կրակ», նաև «հրկեզ», «բոցե», «հրեղեն», «լուսեղ», «բորբ», «վառ», «ծիրանավառ», ... «ողջակեզ»..., այլև նույն ակունքից սերած մակդիրների շքախմբով՝ «կյանքի աղբյուր», «սիրտ», «սեր»... իմաստներով:

Իրենին-յուրայինին վերադարձրած հոգեկան դեգերումների ողիսականը բառացիորեն շարժանկարել-ձայնագրել է Տերյանը շարքը բացող «Վերադարձ»³-ում՝ դերակատար-անձնակաություն ունենալով իրեն որպես Ուլիս-Ողիսես: Վերադարձ հայրենի հող ու երգին՝ հսկայական տարողություն ու խորհուրդ ունեցող այս սիմվոլներով խորհրդանշվող հայոց հայրենիք նյութական-հոգևոր ամբողջին: Հայրենի հող, որ հարազատ տոհմիկ ժողովրդի հինավուրց ավան-

¹ «Հայրենիքը Տերյանի պոեզիայում ստանում է գեղարվեստական նոր իմաստ, – գրում է Սերգեյ Մարինյանը:– Խնդիրն այն է, որ «վաղ ժամանակների» պոեզիայում հայրենիք և սուբյեկտ հասկացությունները գեղարվեստական պատկերի կառուցվածքում հանդես էին գալիս որպես անջատ ռեալություններ: Որքան էլ ռոմանտիկները կատարեցին գեղարվեստական առաջին փոխաձևությունը՝ կլասիցիզմի ռացիոնալիստական հայրենիքը փոխադրելով սուբյեկտի գաղափարական ու զգայական ընկալումների ոլորտ, այնուամենայնիվ սուբյեկտիվ գործոնն այստեղ դեռևս հանդես է գալիս որպես բովանդակության տարր: Տերյանը հայրենիքը ձուլեց սուբյեկտի զգայություններին, տալով դրանց ներքին ձևի հատկանիշ: Հայրենիք և սուբյեկտ ռեալություններն այստեղ համեմատական չեն, այլ միանշանակ: Ահա թե ինչու արտահայտել հայրենիքը, Տերյանի համար նույնն է թե, արտահայտել իրեն» (տե՛ս Ս. Ս ա ր ի ն յ ա ն. Հայոց գրականության երկու դարը, գիրք 1. Երևան 1988, էջ 410-411):

² Հանգամանորեն տե՛ս «Գարուն», 2000, № 12, էջ 50-53:

³ Բանաստեղծությունը այս վերնագրով տպագրվել է թե՛ «Մշակ»-ում (1916 թ. № 1), թե՛ Տերյանի «Երկերի ժողովածուի» Կ. Պոլսի հրատարակության մեջ: Հետագա հրատարակություններում այն անվերնագիր է:

դուրսումը՝ ուժի, արժանապատվության, կենսականության աղբյուրը, գոյության հիմքերի հիմքն է, այս բազմակի խորհուրդներով՝ Սրբություն սրբոց: Իսկ նաիրյան հոգու ամենամեծական ու ջինջ արտահայտություն հայրենի երգը, հայրենի մեղմ ու անուշ երգը, մայրական հոգեպարար-թովիչ օրորը, որ հակակշիռն է ոգեկործան ամեն տեսակ «սիրենների» երգի, առանցքային, հիմնաթելային բնույթ ունի շարքում:

Նաիրյան հոգու տերյանյան ամենամբողջական բնութագիրը, սակայն, բազմախորհուրդ-բազմիմաստ «հրկեզ»-ն է, որ մի դեպքում՝ «բեկված»-ի ու «ավերված»-ի հարադրությամբ այրման ու ցավի մրմուռ է.

Այն մելամաղձիկ, լացող, միալար
Ելնեջները ներդաշնակ այնպես
Եվ հարազատ են սրտին մեր մոլար,
Հոգուն մեր բեկված, ավերված, հրկեզ ...⁴

մյուսում՝

Իջնում է գիշերն անգութ ու մթին
Եվ այգը բացվում դառն ու մահահոտ,
Բայց հրկեզ հոգիս մորմորում այս տոթ
Հավատում է դեռ քո առավոտին... (1,241)

խորհրդանշում է հրով թրծված, կրակի միջով անցած-գտված, հոգու անպարտելի ուժ, ինչի առհավատյան Նաիրիի վրա բացվելիք լուսաճաճանչ առավոտի հավատն է:

Նաիրիի հոգու անխորտակ հավատն է գորություն տալիս մարտահրավեր նետելու, ավելի ճիշտ ընդունելու, ժամանակավոր հաղթանակներ տոնող չարի ու խավարի մարտահրավերները.

Թող կիտվի խավարն ավելի խրթին
Եվ չարխինդ ճնշե հողն իմ արյունոտ,
Ու թող գա, թե կա, ավելի չար բոթ,
Մեխվի գոհ-երկրիս անարգված սրտին (1,241):

«Մեխվի գոհ-երկրիս անարգված սրտին» տողն արդեն որոշակիացնում է բանաստեղծության ուրվագծվող Նաիրի-Քրիստոս զուգահեռը, որ նաև շարքի հիմնական առանցքներից մեկն է՝ խորհրդանշային բոլոր առումներով: Իսկ զուգահեռի հիմքը «գոհ»-ն է՝ որպես քրիստոնեության գերագույն խորհուրդ, խարխիս գոհաբերության խորհրդանիշ: Ըստ քրիստոնեական դավանանքի՝ Աստված այնքան սիրեց մարդուն, որ իր միածին որդուն գոհաբերեց ի սեր և ի փրկություն նրա, հանուն մարդու՝ հոգևոր մաքրագործման, հանուն մարդու մարդացման:

⁴ Վ. Տ ե ռ յ ա ն. Երկերի ժողովածու չորս հատորով (այսուհետև՝ ԵԺ). հ. 1, Երևան, 1972, էջ 240 (հետագայում հատորը և էջերը կնշվեն տեքստում՝ մեջբերումներին կից):

Եվ քանի որ Աստված նույն ինքը Հայր-Որդի-Սուրբ հոգի Երրորդությունն է, ուրեմն Քրիստոսի զոհաբերությունը Աստծո ինքնազոհաբերումն է:

Զուգահեռը շա՛տ ու շա՛տ խորն է՝ առավելապես երկու համեմատելիների ներքին, էական առնչություններով ու հարազատությամբ. առավել ևս արժեքավոր, համոզիչ ու հավաստի Տերյանի՝ ճշմարիտ քրիստոնյա լինելու հանգամանքով: «Մի հատկություն, որ նա ժառանգել էր ընտանիքում – համառորեն ապրեց նրա մեջ մինչև վերջ: Դա Տերյանի միաստիքական հակումն է, նրա տրամադրությունների որոշ կրոնական գունավորումը: Մի շարք առարկաներ ու հասկացություններ, որոնք մանկությունից նրա աչքում նվիրական մտապատկերներ էին դառել, մնում են նվիրական ցմահ»⁵, – վկայում է բանաստեղծի մտերիմ ընկեր ու բարեկամ Պ. Մակինցյանը:

Տերյանի բանաստեղծական վաստակի մեծ մասի հանգամանալի, խորը հետազոտման արդյունքում Խ. Սարգսյանն ուղղակի արձանագրում-փաստարկում է. «Տերյանի գիտակցությունը քրիստոնեական է...», «Առհասարակ Վահան Տերյանը մեծ չափերով հակված է քրիստոնեական հոգեբանության: Հեզություն, խոնարհություն, անտրտունջ հնազանդություն – սրանք այն բարեմասնություններն են, որոնց նա շատ հաճախ մեղմորեն երգում է: Տերյանի տրտմությունն ու թախիծն էլ գերազանցորեն քրիստոնեական են. խորթ ու անհարազատ վայրերում դեզերող հոգու մի կարոտ առ իր իսկական հայրենիքը»⁶:

Տերյանի հավատամքն է՝ ճշմարիտ ինքնահաստատումը, ճշմարիտ լինելիությունը ի սեր մարդու ինքնազոհաբերումն է: Հենց այդպիսին է Նաիրիի գոյությունը: Ու թեև Նաիրին բազմադեմ, բազմատարր, սակայն բնությամբ նույն-գո ամբողջություն է, որի կերպարի էականը, ընդերքայինը ինքնազոհաբերվող

⁵ Վ. Տ երյան. Երկերի ժողովածու. հ. 1, Կ. Պոլիս 1924, էջ XIII:

⁶ Խ. Սարգսյան. Վահան Տերյան. Երևան, 1926, էջ 13-14: Այլ առիթով, այլ դիտանկյունից նույնն է հաստատում Չարենցը՝ թեպետ փոքր-ինչ աչառու մեկնաբանությամբ, բայց, ըստ էության, ճշմարիտ դիրքերից. Տերյանի սոցիալիստական կողմնորոշման, հեղափոխության մասնակցության պատճառը համարում է նրա քրիստոնեական աշխարհընկալումը. «Իր նամակներից մեկում գրում է. «Օրհնված լինի Հոկտեմբերը», թեկուզն նա այդ բացականչությունից անմիջապես հետո ավելացնում է, որ ինքը իրեն զգում է պայծառացած ու լուսավոր և եզրակացություն է հանում, որ «այդպես պիտի զգային իրենց առաջին քրիստոնյաները»: Շատ բնորոշ է Տերյանի հոգեբանության համար վերջին համեմատությունը. դա ցույց է տալիս, որ Տերյանը չէր կարող հասկանալ պրոլետարական հեղափոխության բնույթը. կոմունիզմը նրա համար «քրիստոնեություն» է, «հավասարության իդիլիա» և սա այլ կերպ չէր էլ կարող լինել» (տե՛ս Ե. Չարենց. Երկերի ժողովածու. հ. 6, Երևան, 1967, էջ 13-14): Սոցիալիզմի սեփական ընկալումը հավաստում է, որ նաև քաղաքական-հասարակական համակարգում Տերյանի որոնածը նախ և առաջ մարդու հոգևոր ինքնահաստատման, ըստ ամենայնի դրսևորման հնարավորություններն են: Եվ օրինաչափորեն գտածը նույն քրիստոնեական սերը, հոգևոր եղբայրության վրա խարսխված մարդկային մարդավայել հարաբերությունների հեռանկարն է. «Սոցիալիզմը – դա մտերմության, եղբայրության ամենաբարձր ձևն է, ոչ թե արյունակցական, այլ հոգևոր, ֆիզիկական (տնտեսական), բարոյական եղբայրություն» (3, 233): Եվ ավելին՝ Քրիստոսի սիրանքը կրկնելով – ի սեր մարդկանց իր անձը զոհաբերելով՝ Աստծուն՝ բարձրագույն իդեալին մոտենալու իրական կարելիություն. «Սոցիալիզմը – դա անհատի անսահման ազատությունն է, անհատի, որ սիրում է ուրիշներին, ինքն իրեն զոհաբերում է և դրանով իսկ հաստատում իրեն» (3, 233):

լինելու իրողությունն է. ինչ խորհրդանիշով էլ ներկայանում է Նաիրին՝ քրիստոնեական՝ Քրիստոսի, Տիրամոր, թե հեթանոս հայոց Արայի, անտիկ Ողիսև-Ուլիսի, վասն Կյանքի, Լույսի, Միրո զրկանքներ, չարչարանքներ հանձն առնող, իր էությանն անդավաճան, տառապած-տառապող անպարտ, անմահ ոգի է:

«Երկիր Նաիրիի» ամենամեծ երակը, ամենահիմնական ու հզոր լարը, այնուամենայնիվ, տառապանքն է՝ «Նաիրյան հոգու բարձր տառապանքը», Նաիրիի մեծ ու վսեմ ողբերգությունը: Ողբերգություն, որի ըստ ամենայնի համեմատելին Տերյանի համար Քրիստոսի մարդկային-աստվածային ողբերգությունն է: Այսու Աստվածորդին է շարքի ամենահիմնական խորհրդանիշը: Հետաքրքիր է, սակայն, որ բանաստեղծը բնավ չի հոլովում նրա անունը: Պատճառներից գլխավորը, թերևս, հետևյալն է: XIX դարից, ազգային զարթոնքի հենց սկզբից, հայ իրականության մեջ հաստատվում էր մի տեսակետ, ըստ որի հայ ժողովրդի ազգային աղետների, եթե ոչ բոլորի, ապա մեծագույն մասի պատճառը քրիստոնեությունն է՝ իբրև հնազանդություն, անտրտնջություն քարոզող, աշխարհիկը, պայքարը մերժող վարդապետություն: Քրիստոնեությանն այս առումով հակադրում էին հեթանոսությունը: Մոռանում էին, սակայն, որ նույն այդ քրիստոնեությունը եվրոպական ազգերին ոչ միայն չէր վնասել ու վնասում, այլև օգնում էր նույնիսկ նորանոր երկրներ զավթելու, ժողովուրդներ ստրկացնելու՝ խաչակրաց արշավանքներից մինչև գաղութատիրական վերջին «նվաճումներ»: Եվ ազգային աղետների բազմապատկմանն ու խորացմանը զուգընթաց ամրանում էր հիշյալ մտայնությունը. XX դարասկզբին հայոց գրականության մեջ հեթանոսական շարժման հիմքերից մեկն էլ սա էր: Հայտնի է Տերյանի միանշանակ ժխտական վերաբերմունքը այդ շարժմանը: Հեթանոսական շարժման դեմ Տերյանի անհանդուրժողությունն ուներ խոր պատճառներ: Նկատենք, սակայն, որ ժխտելը չէր վերաբերում հեթանոսական հնօրյա կրոնին կամ հայոց հեթանոսական անցյալին⁷: Այսինքն՝ Տերյանը չի ընդունում իր օրերի հեթանոսական կեցվածքը, երբ համաշխարհային քաղաքակրթության հիմքը քրիստոնեությունն է, համաշխարհային մշակույթի ընդհանրական «լեզուն»՝ քրիստոնեությունը:

Տերյանը մերժելով մերժում է քրիստոնեությունը ոչ իբրև ամբողջական համակարգ, այլ առանձին դրույթների գնահատականներով արժևորելը, և հենց այդպիսի արժևորման արդյունք վերոհիշյալ այն կարծիքը, թե վերջինս թույլերի կրոն է: «...Սակայն ես կրոն ասելով միշտ զգում եմ, որ այդ «կրոն» խոսքը մեր կղերի և սեմինարիստական ինտելիգենցիայի շնորհիվ բոլորովին կորցրել է իր իսկական իմաստը (ինչպես և շատ ու շատ ուրիշ բառեր ու դարձվածքներ)...» (3,60),– գտնում է բանաստեղծը՝ մղելով սույն հետևությանը. այն է՝ իմաստափոխվել-իմաստազրկվել են ուրեմն և քրիստոնեություն, Քրիստոս բառ-երևույթները: Եվ որովհետև այդ «Քրիստոսի» հետ Նաիրիի զուգահեռը կարող էր բոլորովին այլ, անցանկալի ընկալումների տեղիք տալ՝ ի վերջո այլափոխելով «Երկիր Նաիրի» շարքն ամբողջապես, Տերյանը չի օգտագործում անունն իբրև խորհրդանիշ, այլ դիմում է այդ ճշմարիտ էությունն առարկայացնող, բնութագրող նաև

⁷ Տե՛ս Վ. Տերյանի. ԵԾ, հ. 3, Երևան, 1975, էջ 58:

քրիստոնեական որոշակի խորհուրդներ՝ զոհաբերություն, խաչելություն, հարություն, մկրտություն-կնունք, պայծառակերպություն, հաղորդություն, մարմնավորող բառ-խորհրդանիշների, որպիսիք բազմիցս և բազմաթիվ համադրումներով հոլովվում են շարքի առաջին էջից վերջինը: Բազմաշերտ-բազմախորհուրդ հոլովումներ, որպիսիք բովանդակային նոր խորհուրդ, նոր իմաստ արտահայտելով՝ ըստ ամենայնի նմանակում են Քրիստոս երևույթը՝ որպես Նաիրիի «նախատիպ»:

«Բջնում է գիշերն անգուր ռու մթին» բանաստեղծությունը կենդանագրում է Նաիրիին հենց այդպիսի զուգահեռով: Տակավի՛ն առաջին իսկ տողերից Նաիրին խավարի, չարի, մահի հարձակումների թիրախ է և հակամարտության մեջ՝ ներկայանալով, բնականաբար, իբրև լույսի, բարու, կյանքի կրող: Ապա հատկապես «հրկեզ հոգին», «զոհ-երկրիս», «սուրբ ուղի», «վեհ պսակ» բառակապակցություններով հառնում է Քրիստոս-Նաիրիի զուգահեռը՝ իբրև անմարելի, անշեջ լուսեղեն Լույս. չէ՞ որ Քրիստոսը նախ և առաջ Լույսի, անստվեր, պայծառ Լույսի խորհրդանիշ է. չէ՞ որ Աստված անհուն խավարում «Եղիցի լոյս»-ից սկսեց յուր արարչագործությունը. այսինքն՝ խավարին հակադրեց լույսը, անկենդանությանը՝ կյանքը, իր որդուն էլ ուղարկեց խավարի ու մահվան դեմ կովելով մարդկանց հոգիները փրկելու խավարից և պարզելու կենաց լույսը. «Ես եմ աշխարհի լույսը, ով իմ հետևից է գալիս խավարի միջով չի քայլի, այլ կրնդունի կենաց լույսը» (Հովհ. 8.12),- սրանք իր Փրկչի խոսքերն են:

Էությունների հարազատություն-նույնականությունը նաև ճանապարհների ու ճակատագրերի համանմանություն է: Նաիրին էլ անարգված է ճիշտ և ճիշտ Քրիստոսի պես: Աստծու մարդեղենացած որդուն, կատարյալ մարդուն, իրենց անսահման սիրող-ներողին, փրկչին դաժանորեն անարգում են՝ զրպարտում, ծաղրում, ծանակում, հայհոյում, գանակոծում, և ի վերջո, խաչում՝ բացարձակ անմեղ, ազնիվ մարդ-աստծուն ստորադասելով մարդասպան Բարաբբային: Մինչդեռ խաչը տանջանքի այն գործիքն էր, որ հռոմեական իշխանությունը վերապահում էր ստորին խավի ներկայացուցիչներին՝ ստրուկներին և խոնարհ ծագումով մարդկանց. երևելի մարդկանց համար պատվավոր մահապատիժ էր գլխատումը: Այնինչ Քրիստոսը աստված էր ու թագավոր, և ոչ միայն այդ անարգ մահվանն էր դատապարտված, այլև անարգված էր երկու ավագանների կողքին խաչվելով, որ նշանակում էր նրանց կարգը դասվել:

Նաիրիի և իր որդու՝ նաիրցու փոխհարաբերությունները նույնպես հիշեցնում են Աստված-Քրիստոս փոխհարաբերություններ. առաջին քառատողում որդին դիմում է Նաիրիին երկրորդ դեմքով՝ «քո առավոտին», բայց «հրկեզ»-ը, որ այստեղ համադրված է «հոգի»-ին, իսկ շարքի մյուս բանաստեղծություններում ոչ միայն նրան, այլ նաև Նաիրիին՝ «հրկեզ քո հոգին..», «հոգուն մեր բեկված, ավերված, հրկեզ», վկայում է երկուսի՝ հրկեզ հոգով նույնական համագոյություն լինելը՝ ճիշտ Սուրբ Երրորդության նման:

Բանաստեղծության վերջնամասում արդեն առավել հստակվում է նշված համագոյությունը. զոհ-երկիրը այլակերպվում է ուխտավոր-որդու՝ շարունակաբար, դարեր իր-Նաիրիի ուխտին անդավաճան «մի հեզ նաիրցու», որի ընթացքն

էլ նույնանում է երկրի ուղուն՝ «զնում եմ անկանգ» – «սուրբ է քո ուղին»: «Գուժկան գիշերն» ու «դավ»-ը զուգահեռվում են Քրիստոսի մատնության գիշերվան, որից սկսվում են նրա չարչարանքներն ու անարգանքները:

Խաչի վրա Քրիստոսը, ըստ քրիստոնեական դավանանքի, հաղթեց մահին, քանզի ենթադրյալ վերջը դարձավ նոր սկիզբ. Քրիստոսը հարություն առավ՝ վերստին կյանք առավ: Այսպես, խաչելությունը երկունք է, նոր մարդու, նոր կյանքի կարեվեր երկունք: Ճիշտ նույնպիսի երկունքի է կոչում Նաիրիին խաչելության ժամին իր հավատավոր որդին: Տերյանը հավատացած էր, որ XIX դ. վերջին – XX սկզբին հայ ժողովուրդն ըստ ամենայնի երկունք էր ապրում, ինչը պիտի պսակվեր հոգևոր-քաղաքական վերածննդով:

Եվ այդ երկունքը համընկավ հայության խաչելությանը...

Բանաստեղծության վերջին տողը անվերապահորեն հաստատում է Նաիրիի տեղը Քրիստոսի կողքին. սուրբ ուղի – վեհ պսակ: Վեհ փշե պսակ: Քրիստոնեական այս բառ-խորհրդանիշը Տերյանի ընկալմամբ ամենից ավելի խորհրդանշան է հոգևոր հոգր, անպարտելի ուժի, հոգու սխրանքի: Այդ է հաստատում հետևյալ փաստը: Հայտնի է, որ Տերյանն ունի «Փշե պսակ» անավարտ շարք՝ «Свой подвиг ты свершила прежде тела, Безумная душа!...» (Е. Баратынский) բնաբանով (որը նաև «Գիշեր և հուշեր» շարքինն է): Մեծապես հոգու սխրանք է հենց Նաիրիի լինելությունը: Մի էական հանգամանք վկայում է նաիրյան սխրանքի այդուհանդերձ առանձնակի, ինքնահատուկ էությունը. Քրիստոսը տրտում էր ու տազնապած մատնության գիշերը. «Հոգիս տխուր է մահու չափ... Հա՛յր իմ, եթե կարելի է, այս բաժակը թող ինձնից հեռու անցնի...», «...Հոգիս հոժար է, բայց մարմինս՝ տկար...» (Մատթ. 26.38,39,40): Նաիրիի որդին՝ հեզ նաիրցին չի ապրում երկվության, նահանջի պահ, անտրտունջ ու համառ, իր կոչման, առաքելության և պարտքի գերազույն գիտակցությամբ ու զգացումով. առ Նաիրի սիրուց ու հավատքից մինչև իսկ խանդավառ ու խնդագին է նրա զոհաբերությունը:

Այս բանաստեղծությունը լույսի-հրի ու խավարի հակամարտության հրաշալի արտացոլում է նաև ուղղակի իմաստով. մանավանդ նախավերջին տողի «Այրվի՛ր, երկիր իմ հավատով անմար» (ընդգծումը մերն է.– Մ. Ս.) («Գործ» 1917թ. - 1) տարբերակով:

Բայց... և եղև խավար...

Հայրենիքում իմ արնաներկ

Գիշերն իջավ անլույս ու լուռ (1, 242):

Գիշերը, որ այստեղ նույնն է թե չարի և մահվան խորհրդանիշ խավարը: Աստվածորդու խաչելությանը հաջորդած և մահվանը նախորդած միջոցին խավարը պատում է ամբողջ երկիրը. շղթայազերծված է խավարի իշխանությունը, որովհետև խաչ է հանված, մահվան է դատապարտված Լույսը, Բարին, Սերը, Կյանքը: Խաչված, խավարից պարտված Նաիրիի ողբերգությունն է ողբում Տերյանը՝ որպես դրախտի դժոխքի վերածվելուն ականատես հավատացյալ: Եվ քրիստոնեականել զուսպ, անաղմուկ և գեղեցիկ է այդ ողբը:

Առանց թատերայնության և զարմանալի պարզությամբ է բանաստեղծը պատկերագրում իր ու իր երկրի ողբերգությունը, որ մեծ չափով ընդհանուր մարդկային է առհասարակ, որքանով Նաիրիում կատարվածը համամարդկային արժեքների ոչնչացում է: Միրո, գեղեցիկի, լույսի, սրտալի ջերմության՝ մարդկայնության օրրանը վերածված է հակամարդկային տիրույթի. վարդի անուշ բույրի, նուրբ ու շողշողուն գեղեցկության, կյանքի փոխարեն՝ մահ, դիեր, դիեր... սիրերգերի՝ սրտին կենդանություն-կենսունակություն պարզևող երգի փոխարեն՝ խոր-խոր խոցեր բացող վերքեր, սիրառատ ու ջերմ հայացքներով փոխանակվող-բորբոքվող-արծարծվող հրի փոխարեն՝ սրի պես հաստու, մահացու հայացքներ... Բայց մեծագույն ողբերգությունը Նաիրյան հոգու անարգված, անգոր վիճակն է.

Մեր հին հոգին համր ու մոլոր,
Ա՛խ, և անգո՛ր և անարգվա՛ծ... (1, 242):

Ողբին հաջորդում է սիրո և ակնածանքի նույնպիսի զուսպ խանդաղատանք ու մեղմ խոստովանություն՝ անսահմանորեն ներհուն, աղոթանման, ինչպես վայել է քրիստոնյային, ավելի ճիշտ, ինչպիսինին արժանի է հիբրավի քրիստոնեական սրբություն հիշեցնող հայրենիքը.

Դու հպարտ չես, իմ հայրենիք,
Տրտում ես դու և իմաստուն.
Կիզում է քեզ մի հուր կնիք,
Մի հրմայող ու հին խոստում (1, 243):

Քրիստոնեական աշխարհընկալումով հպարտությունը արատ է և մեղք⁸, պատճառ ու ծնող բազում չարիքների ու մեղքերի, որոնք, ի վերջո, կործանում են մարդուն: Հպարտությունը հոգևոր ցածր ու աղքատ բնություն վկայող հատկանիշ է՝ անգոյակցելի հոգևոր-բարոյական արժանիքների, առաքինությունների հետ, մշտապես բացակա բարձր ու ազնիվ գոյից: «Դու հպարտ չես»-ի համադրությունը հատկապես «իմաստուն»-ին ի սկզբանե երևութացնում են Նաիրիի ազնվական և սուրբ էությունը: Բնչու՞ հատկապես «իմաստուն»-ի: Քրիստոնեական արժեքների համակարգում իմաստությունը բացառիկ մեծություն է: Աստվածաշնչի մի քանի գրքով (Առակներ, Ժողովող, Իմաստություն Սողոմոնի, Միրաքի իմաստություն) ներկայացվելն ու ներբողվելը աներկբայորեն փաստում են հենց դա:

Իսկ ի՞նչ հուր կնիքի մասին է խոսքը: Մկրտություն-կնունքը է քրիստոնեական գլխավոր խորհուրդը: Մեկնությունը սա է. Մուրբ հոգին դրոշմում է իր պատկերը, իր կնիքն է դնում քրիստոնյայի վրա ի նշան իրենը լինելու և իբրև փրկության առհավատյա: Մկրտությունը հրապարակավ դավանություն է առ

⁸ Տե՛ս Յ ո վ ս է փ Օ ր բ է լ ի. Նախաշախիդ կրօնագիտության ըստ ուղղափառ դաւանութեան Հայաստանեայց սուրբ Եկեղեցւոյ. Թիֆլիս, 1870, էջ 64:

Քրիստոս և առ նրա փրկություն հավատ, կենդանի միություն իր հետ, իր պատվիրաններով ապրելու հանձնառություն, և յուր փառքին ու հավիտենական անմահությանը մասնակից լինելու ակնկալիք⁹: Քրիստոսից առաջ մկրտությունը եղել է ջրով և առնչվում էր մարմնին: Աստվածորդու առաքելությունը, սակայն, մարդու-մարդկության հոգևոր փրկությունն է: Եվ իր մկրտությունը Մուրբ հոգով և հրով է¹⁰:

Անհպարտ-ով, տրտում-ով, իմաստուն-ով, հեզ-ով ու անքեն-ով ճիշտ այդպես էլ կենդանագրվում է քրիստոնեական առաքինությունների մարմնացում Նաիրին: Հուր կնիքի և հմայող ու հին խոստումի կիզման վիշտն էլ ակներն են դարձնում դա: Մկրտությամբ խոստացվող փրկությունը նաև ճշմարտության, ազնվության, բարու, սիրո և եղբայրության հաղթանակի խոստում է: Նրանով հմայված անդավաճան հավատավորի կենսակերպն է անվերջ այրվել-կիզվել հավետ անսահման բաղձալի չիրականանալուց: Ասել է թե՛ նաիրյան վիշտն էսպես ավելին է, քան «ազգայինը». այն համազորն է աշխարհի, մարդու անկատարության աստվածային վշտի: Դրանից է, որ ոչ թե խղճահարություն է ազդում ու հարուցում, այլ խորախորհուրդ ակնածանք .

Եվ միթե այդ վշտիդ համար
Չեմ սիրում քեզ այսպես քնքուշ
Եվ խոնարհվում քեզ պես համար,
Օ, հայրենիք դառն ու անուշ (1, 243):

Միտ պատճառակցական ակունքները հասկանալու հարցերը կամ ավելի ճիշտ՝ պատասխանները հաստատում են այն, ինչ հուր կնիքը վավերացրել էր ի սկզբանե՝ Նաիրիի հարազատությունը Աստծուն՝ կատարյալ գոյին, որ նախ և առաջ նշանակում է անպարագիծ, անխտրական սեր ու գութ (չէ՞ որ հենց սրանք են Աստծո լույսի ամենահիմնական բաղադրանյութերը): Նաիրիի սերն ու գութն էլ անքակտելի են վշտից ու տառապանքից: Եվ ողբերգական է լույսի ու բախտի հակասության չափը: Այսինքն՝ նրա հանդեպ զգացմունքը երկսայրի է՝ սիրո բերկրանք-ցավի կսկիծ, քաղցրություն-դառնություն:

Առ հայրենիքը Տերյանի սիրո նմանօրինակ «տարօրինակությունը» որոշակի արտահայտություն է գտել բանաստեղծության վերջնամասում: «Չըշյացա խնդուն փառքիդ անցյալ ու հին փայլով երբեք» տողերը ժխտում-մերժում են իբրև հայրենասիրություն մատուցվող ազգային սնապարծությունը, «հայրենասիրության» տարածված այն տեսակը, որին հետաքրքրողը միայն հայրենիքի անցյալ փառքն ու մեծությունն է: Անցյալ փառքի հիշատակումը մի կողմից նշան է այն բանի, որ բանաստեղծը, այնուամենայնիվ, անտարբեր չէ հայրենի երկրի

⁹ Տե՛ս Բառարան Մուրբ գրոց, Կ. Պոլիս, 1881, էջ 359-360:

¹⁰ «...Ես ձեզ ջրով եմ մկրտում ապաշխարության համար, բայց ով գալիս է ինձնից հետո, ինձնից ավելի հզոր է... Նա կմկրտի ձեզ Մուրբ հոգով և հրով. նա, որի քամհարը ձեռքում է, և կմաքրի իր կալը, ցորենը կհավաքի իր շտեմարանում և հարդը կայրի անշեջ կրակով» (Մատթ. 3. 11), - պատգամում է Հովհ. Մկրտիչը:

անցյալ փառքի հանդեպ, մյուս կողմից՝ թեև փայլուն անցյալի և անփայլ ներկայի հարադրումը նս մի ծալք է բացում նաիրյան ողբերգության, սակայն գլխավորն այստեղ ներկա-անցյալ հակադրությունը չէ, ոչ էլ նույնիսկ սիրել-չսիրել, այլ սիրել-շլանալ, սեր-շլացում:

Տերյանը չի գովերգում հայրենիքը, խոստովանում է սեր ու նվիրվածություն:

Անցյալ (անցած) ու հին, ասել է՝ ժամանակավոր փառքի փայլը չի կուրացնում, խնդությունը չի խլացնում նրան. ասել է թե՛ հայրենիքն անկենդան, անհոգի կուռք չի դառնում, այլ մնում է այն, ինչ կա՝ կենդանի աստվածություն, առ որը սիրո կրողը անանց ու հավերժ կենդանի հոգին է:

«Մշուշի միջից...» բանաստեղծությունը Նաիրյան հոգու մարմին առած Նաիրիի ըստ ամենայնի բացառիկ դիմապատկերն է. հիրավի կոթողային սրբապատկեր-սրբաքանդակ:

Մշուշի միջից, – տեսի՛լ դյութական, –
 Բացվում է կրկին Նաիրին սրտում.
 Ո՞ր երկրի սրտում թախիժ կա այնքան,
 Եվ այնքան ներում – ո՞ր երկրի սրտում.
 Որտե՞ղ են քարերն այնպես վերամբարձ
 Ձեռների նրման պարզված երկնքին,
 Որտե՞ղ է աղոթքն այնպես վեհ ու պարզ
 Եվ գոհարերումն այնպես խնդագին...
 Որտե՞ղ է խոցում այնպես չար ու խոր
 Միրտը մարդկային դաշույնը քինոտ.
 Որտե՞ղ է հոգին այնպես վիրավոր
 Եվ անպարտ երկիրն այնպես արյունոտ... (1, 244) :

«Տեսիլ» բառը չի զարմացնում բոլորովին, այնքան որ ճշմարիտ, բնական և այնքան խորհրդավոր է ներկայանում Նաիրին: Աստվածապաշտի, հավատացյալի ըմբռնումով տեսիլը որն է երևույթի, իրողության, տեսարանի հրաշալի կերպով երևալն է մարդու մտքին¹¹, հոգու և մտքի պայծառության պահ, երբ երևույթը բացառիկ պարզությամբ ու հստակությամբ է երևում, երբ մարդը հասու է գերզգայականին՝ ամենաճշմարտին, ամենաէականին: Դրան ընդունակ են մարգարե կոչված¹² ընդհանուր անունով եզակիները:

Տերյանը տակավին մանկուց պետք է որ ճիշտ այսպես ընկալած լիներ «տեսիլ» հասկացությունը: Մի առիթով նա գրում է. «Աստված մարդուն կյանք է պարզևում, և ամեն ինչ տեսիլքի պես է, միայն աչք ու ականջ ունեցիր, որ տեսնես ու լսես, սիրտ ունեցիր, որ տոչորվես ու լաս և լաս անվերջ, չէ՞ որ դա էլ երկնային պարզն է» (4, 131): Եվ զարմանալի չէ, որ Տերյանի համար բանաստեղծ և մարգարե հասկացությունները հոմանիշ են: Չնոռանանք նաև, որ Տերյանն իրեն զգում էր որպես Նաիրյան հոգու մարգարե, կոչված¹³: Արդ, «Մշուշի միջից...» տե-

¹¹ Տե՛ս Բառարան Սուրբ գրոց, էջ 539:

¹² Տե՛ս նույն տեղում, էջ 343:

¹³ Տե՛ս Վ. Տ եր յ ա ն. ԵԺ, հ. 4, Երևան, 1979:

սիլը այդ հոգու ինքնաբացահայտումն է, հայտնությունը¹⁴, Նաիրիի ճշմարիտ էության մարգարե բանաստեղծի ճանաչումն է:

Տեսլացած Նաիրին անսահման թախիծ ու ներում համատեղող սրտով, պարզ և վեհ աղոթքով ու խանդավառ գոհաբերմամբ, չար ու խոր խոցվածությամբ, վիրավոր հոգով նորից ու կրկին հիշեցնում է միակ զուգահեռը՝ մարդկային ամենամեծ սիրո ու ամենախոր տառապանքի խորհրդանիշ Քրիստոսին: Առհասարակ Նաիրին այստեղ պատկերանում է իբրև անձանձիր, անկեղծ, ի խորոց սրտի վասն մարդու մարդացման մշտնջենական աղոթող և ինքն իրեն վասն աշխարհի մաքրության ու կատարելության սրտանց գոհաբերող:

Գլխավորն այն է, որ Տերյանը տեսնում և ներկայացնում է իրական, հողեղեն, երկրային Նաիրիի մեջ ու միջոցով Նաիրյան հոգին: Ու թեև Նաիրին նյութականացած է ընդամենը մեկ բառով՝ քարեր, բայց այնքան ճշմարիտ ու դիպուկ. Հայոց քարաստան երկիրը ժայռերով, լեռներով ու ժայռակերպ վանք-եկեղեցիներով ձգվում-ձգտում է երկինք՝ հնում կացարանն աստվածների, ապա՝ Աստծո՝ կրճատել-փոքրացնելով մարդու և Աստծո, հայրենի հողի և Աստծո թագավորության միջև եղած տարածությունը: Հայոց հոգևոր սուրգմբեթ տաճարները սրագագաթ ժայռերի կողքին. երկուսն էլ հիշեցնում են ձեռքերի ավերն իրար հպած-միացրած ուղղած դեպի երկինք՝ առ Աստված, ծնրադիր աղոթող:

Աղոթքը Աստծու, կատարյալի հետ հոգևոր հարաբերություն, հաղորդակցություն է, մարդու հոգու ամենաանկեղծ ինքնաարտահայտություն: Ժողովրդի հավաքական աղոթքը իր մշակույթն է: Տերյանը գտել է նաիրյան աղոթքի, որ նույնն է թե Նաիրյան հոգու ճշգրիտ բնութագիրը՝ պարզ ու վեհ: Չէ որ պարզությունն ու վեհությունը հայոց արվեստի ամենատարբեր դրսևորումների էական առանձնահատկություններն են համարել թե՛ հայ, թե՛ օտար արվեստաբաններից շատերը:

«Չեմ դավաճանի իմ Նվարդին» բանաստեղծությամբ և մասնավորապես Արայի բազմախորհուրդ ներկայությամբ «Երկիր Նաիրին» հարստանում է նոր բովանդակությամբ:

Չեմ դավաճանի իմ Նվարդին
Որքան էլ դյուրթես, օ, Շամիրամ.
Որպես արքան այն, մանուկ Արան,
Չեմ դավաճանի իմ Նվարդին:
Որքան փորձանք գա իմ գոհ-սրտին,
Որքան էլ փայլող փայե նրան
Չեմ դավաճանի իմ Նվարդին,
Որքան էլ դյուրթես, օ, Շամիրամ¹⁵ (1, 233):

¹⁴ «Տեսիլ» նշանակում է նաև հայտնություն. տե՛ս նոր բառգիրք Հայկազեան լեզուի, հ. II, Երևան, 1981, էջ 868:

¹⁵ Նամակում, որով Նվ. Թումանյանին է ուղարկել «Չեմ դավաճանի իմ Նվարդին» բանաստեղծությունը, Տերյանը տալիս է սույն մեկնությունը. «Այս տրիոլետը գրել եմ ի պատասխան նրանց, որ ասում են ինչու՞ ռուսերեն չեք գրում (օրինակ Գորկին) և առհասարակ օտարներին: Չեք հայտնի՞ է, որ Արա Գեղեցիկի կինը Նվարդ է եղել...»

Արա Գեղեցիկը արքա է ու աստված, ինչպես շարքի ամենահիմնական խորհրդանիշը: Բայց, կարևոր մի հանգամանք՝ հայոց արքա և հեթանոս աստված, որը, սակայն, «նախատիպն» է Քրիստոսի, քանզի նույնական են ամենաէականով՝ մարդ-աստված, ինքնագոհաբերվող, և գլխավորը՝ մեռնող-հառնող, այսինքն անմահ: Սա գլխագիրն է Նաիրիի օրգանական շարունակականության ու ընդհանրականության և նշանակում է, թե՛ հեթանոս-քրիստոնյա, անցյալներկա – Նաիրին էությանը նույնն է հարատև՝ փոփոխվող-փոխակերպվող լոկ ձևերով, վիճակով, անունով:

Արայի, հայոց հայրերի ու որդիների ամրակուտ հոգով ու ոգով է հարատև Նաիրին: Ի՞նչ ասել է ամրակուտ ոգի ու հոգի: Հարավոփոխ աշխարհում անփոփոխ, էությունն անադարտ պահող, որն է ներգործությունից չէափոխվող, այլ խոսքով՝ ինքն իրեն հավատարիմ: Այսինքն՝ հավատարմությունը զուտ բարոյական բարձրագույն առաքինություն չէ, այլ ինքնապահպանման, լինելության հիմնարար նախապայման:

«Երկիր Նաիրիի» դոդանջներից մեկն էլ Նաիրիի չհասկացվածություն-միայնությունն է, որ շարքի երկրորդ բանաստեղծության «Մեզ չի հասկանա օտարերկրացին, մեզ չի հասկանա սառն օտարուհին...» կրկնակից հետո լիաձայն ծավալվում է «Քեզ կրմնա միշտ օտար...»-ում:

Չի հասկանա ձեր հոգին և՛ ծույլ, և՛ օտար,
Տաճար է մեր երկիրը՝ սուրբ է ամեն քար (2, 72):

Այս խոհ-զգացմանն են նաև ձայնակցում-արձագանքում ,Քեզ կրմնա միշտ օտար...» բանաստեղծության բոլոր տողերը՝ ներբողայինից տարբեր դրամատիկ-ողբերգական ակորդներով:

«Օտարերկրացի», «սառն օտարուհի», «դուք» և «մենք» փոքր-ինչ անորոշ-վերացական հավաքականություններն ու դրանց հարաբերություններն այստեղ որոշակիանում-առարկայանում են «դու» և «ես»-ով: Ու քանի որ «ես»-ը և «մենք»-ը նույնական են, Նաիրիի միայնության, չհասկացվածության ողբերգությունը կրկնակի է՝ անձնական անհատական-ազգային: Բայց նաև՝ երկսայրի. անհատ մի մարդու, թե՛ մի ամբողջ ժողովրդի վիշտ ու տառապանքին անհաղորդ, օտար. չէ՞ որ հոգու սնանկության, մարդկայնության մեծ պակասի, Աստծուն, կատարյալին մերձենալու անկարողության նշան է:

Առհասարակ սա պատասխան է նրանց, որ ուզում են դուրսել ուրիշ կողմեր իմ անուշ երկրից (միստիկ մտքով...)» [Ե. Չարենցի անվան Գրականության և արվեստի թանգարան (այսուհետև՝ ԳԱԹ), Հովհ. Թումանյանի ֆ. (լրաց.), -141]: Ի դեպ, միայն Պ. Մակինցյանի հրատարակած Վ. Տերյանի երկերի ժողովածուում է, որ սույն բանաստեղծությունն ունի համարժեք ծանոթություն. ահա այն. «Այս ոտանավորի առիթով իր նամակներից մեկում Տերյանը գրում է, թե՛ Նվարդն ու Շամիրամը պետք է հասկանալ հայ և ռուս լեզու: Մաքսիմ Գորկու առաջարկը՝ գրեցեք ռուսերեն, քանի որ հայերեն գրելը ձեզ չի ապահովում – ներշնչում են նրան երգել իր հավատարմությունը հայ լեզվին (Վ. Տ է ր յ ա ն. Երկերի ժողովածու. հ. 3, Կ. Պոլիս, 1923, էջ 288):

Աստծուն, աստվածային տառապանքին հաղորդվելու կերպերն ու հնարավորությունները բազմազան են, բարձրագույն հաղորդությունը Քրիստոսի պատարագված մարմնի՝ հացի և արյան՝ գինու ճաշակումն է, ինչով իր լրումին է հասնում մերձենալը Աստծուն¹⁶: Ըստ էության, Աստծուն ուղղակիորեն, «ֆիզիկապես» առնչվելու, առարկայական-շոշափելի զգայելու միակ ձևն է դա. հացն ու գինին, իբրև Քրիստոսի մարմին և արյուն, Աստվածորդու մեծագույն սիրանքն ու տառապանքը՝ զոհաբերությունը հաստատող-փաստող ամենահավաստի, իրական վկայություն: Մակայն այդ բացարձակ հաղորդությանը, աստվածաճանաչում-աստվածամերձեցումին հասու են միայն հոգով, մտքով, սրտով մաքրագործված, այսինքն՝ այլ կերպ ու ձևերի մեջ Աստծուն ճանաչած, էությամբ նրան մոտ ու հարազատները:

Այլոց համար հացը հաց է, գինին՝ գինի:

Ճիշտ նույն կերպ էլ, Նաիրյան հոգուն հաղորդվել, նրա բարձր՝ աստվածային տառապանքը զգալը կարող է միայն նույնչափ բարձր հոգեկան վարք ու էություն ունեցողը:

Եվ խնջույքում, հրով հին,
Երբ կարմիր խնդա... (1, 247),

թերևս անսպասելի, անհասկանալի շարունակություն բառացի-ուղղակի ընկալման դեպքում: Մակայն հաջորդ երկու տողերը հուշում են այլաբանություն.

Չես զգա, որ մեր գինին
Մեր արյունն է դա... (1, 247):

Բանաստեղծության աղերսները քրիստոնեական հաղորդության խորհրդին թույլ են տալիս կարծել, որ վերոհիշյալ անհասկանալին կապ ունի հենց այդ խորհրդի հետ: Ըստ աստվածաբանական մի մեկնության՝ հաղորդության խորհուրդը ձգվում է անցյալի և ապագայի միջև. նրա անցյալը հրեական Զատիկն է, ապագան՝ Աստծո թագավորությունը, որ հրեական ավանդությունը սիրում է նկարագրել որպես խնջույք, որի ընթացքում առատորեն հոսում է գինին¹⁷:

Ծանոթ է եղել Տերյանին այս ավանդությունը, թե՛ ոչ, չգիտենք: Բայց այլաբանությունը հարազատ ու ներդաշնակ է շարքի ընդհանուր ոգուն և իմաստաբանում է բանաստեղծության ավարտը. այն է, թե՛ ողջակիզված-պատարագված նաիրյան ժողովրդի արյամբ հեղված «Աստծո թագավորությունը» վայելելիս անգամ նման օտար հոգիները չեն զգա, չեն հասկանա նրան ու նրա անհուն տառապանքը: Այդպիսիների համար հին հրով խնդուն նաիրյան գինին սուկ գինի է, և ոչ նաիրյան ցեղի հրավառ արյուն...

«Երկիր Նաիրի»-ում չհասկացվածության ողբերգությունը չի հանգեցնում ինքնամեկուսացման, օտարի նկատմամբ ատելության: Եվ «Քեզ կըմնա միշտ օ-

¹⁶ Տե՛ս Վ ա զ գ է ն վ. Պ ա լ ճ յ ա ն. Մեր Պատարագը. Ս. Էջմիածին, 1990:

¹⁷ Տե՛ս Հ ա յ ը Մ ի շ ե լ Ք ե ն է լ. Ինչպես կարողալ ավետարանը. Ս. Էջմիածին, 1992, էջ 226:

տար...»-ի լուռ ցավը տեղի է տալիս «Արդյոք «հարյա՛վ» պիտի երգես...» հույս-սպասումով ողբանման այս երգին.

Վարդավառի վարդերը վառ
 Երգող երգչիդ երդվում եմ ես.
 Չըկար երկրիս նրման պարտեզ _
 Եվ նա ավե՛ր, չարին ավա՛ր...
 Սրտի երգիչ դու բոցավառ
 Լուսե՛ երգով ասա հրկեզ
 Արդյոք «հարյա՛վ» պիտի երգես
 Վառված ու որբ երկրիս համար (1, 248):

Այս սոնետ-ակրոստիխը Տերյանը նվիրել է «Բոցավառ Սրտի» երգիչ¹⁸ Վ. Բվանովին: Չակերտներով բառակապակցությունը ռուս սիմվոլիստ բանաստեղծ, սիմվոլիզմի տեսաբան, փիլիսոփա, գեղագետ Բվանովի բանաստեղծությունների ժողովածուներից մեկի¹⁹ վերնագիրն է՝ «Cor Ardens»²⁰: Թե՛ այս խորհրդանիշ-հասկացությունը, թե՛ հատկապես ժողովածուի շարքերից «Солнце-Сердце»-ն - հուշում են Տերյանի և Բվանովի հոգեհարազատությունը, աշխարհընկալման ու բողոքի էական ընդհանրություններ: Նաիրյան շարքում, սակայն, Վ. Բվանովի ներկայության պատճառը նրա «Գազելներ վարդի մասին» շարքի «Роза преображения» բանաստեղծությունն է²¹, կարելի է կարծել, ստեղծված Նաիրի ասած խորհրդանիշի հասկացողությամբ: Բանաստեղծության Տերյանի թարգմանության ծանոթագրության (Վ. Պարտիզունի) մեջ ասվում է. «Բանաստեղծությունը ծանոթագրված է Ա. Վեսելյուկու «Поэтика розы» աշխատությունից վերցված հետևյալ քաղվածքով. «Ելիզավետյուրի հայերը ունեն Վարդավառի տուն: Վարդավառը Քրիստոսի հարությունն է:

Վարդավառ նշանակում է «վարդի ճաճանչումը»: Հարության նախատոնին և գիշերը աղջիկների ու տղաների փոխերգությունները ուղեկցվում են կրկներգով, որի մեջ խոսվում է վարդի մասին: Իսկ քրիստոնեական մեկնաբանությունը հետևյալն է – Քրիստոսը մինչև հարությունը եղել է վարդի կոկոնի նման, իսկ հարության ժամանակ նրա մարմնից հոսել ու այրվել է վարդագույն ճաճանչ, ուրբ եղել է Ադամի մոտ դրախտում, և որով ցույց տվեց Արարչի փառքն ու մեծությունը» (2, 400):

¹⁸ Այս բանաստեղծության մի օրինակի վրա, առաջին էջի սկզբում նշված է՝ «Բոցավառ սրտի» երգիչ՝ Վեչեսլավ Բվանովին, Երկրորդին՝ Певцу Пламенеющего Сердца! Вячеславу Иванову (ԳԱԹ, Վ. Տերյանի ֆ. № 69):

¹⁹ В. И в а н о в. Cor Ardens. Speculum Speculorum. Эрос. Золотые завесы. М., 1911.

²⁰ «Բոցավառ սիրտ» (լատ.). տե՛ս Русская поэзия начала XX века (дооктябрьский период), М., 1977, с. 31.

²¹ Տերյանի սևագրություններում պահպանվում է բանաստեղծության (բնագիրը չհաջողվեց գտնել) թարգմանության անավարտ մի տարբերակ (Վ. Տ երյ ա ն. Եժ, հ. 3, Երևան 1963, էջ 599):

Ուրեմն, Իվանովի բանաստեղծության վարդը Քրիստոսի խորհրդանիշն է, Վարդավառը՝ Քրիստոսի հարության²²: Եվ «Роза преобразования»-ն փառաբանումն է Հիսուսի և նրա հարության: Իվանովի Արմենիա-վարդ(Քրիստոս) համեմատություն-գուգահեռին՝ ի մեծարում-գովերգում Քրիստոս-վարդի, Տերյանը պատասխանում է իր երկրի քրիստոնեակերպության երդումով ու վկայությամբ և երկուսի համար հասկանալի-ընդհանուր խորհրդանիշների լեզվով՝ արտակարգ վառ վարդագույն-հրագույն-կարմիր-բոսոր գույներով և բազմաձայն, բազմեղև համանվագով:

Եվ այսպես, Նաիրիի երգիչը նախ հպարտ, հանդիսավոր երդումով վկայում է, որ իր երկիրն աննման պարտեզ էր՝ «Այնտեղ, ուր կար այնքան սիրերգ, և՛ վարդի բույր, և՛ սրտի հուր» հուշարարությամբ նաև՝ վարդավառ-վարդահեղեղ պարտեզ, ասել է՝ դրախտ: Բայց «չկար»-ն արդեն իսկ, թեպետ անորոշ ու տարտամ, ցավ է խառնում երդումին, իսկ «Եվ նա ավե՛ր, չարին ավա՛ր...»-ը՝ որոշակի, անագորույն՝ դրախտի կործանման ողբերգություն: Ապա ուզում է հարցում-կոչով հասկանալ ի վերջո իր վառված՝ ողջակեզ ու որբ՝ «сиротливый, одинокий, покинутый» (բանաստեղծության ռուսերեն բառացի թարգմանության մեջ «որբ»-ի փոխարեն գրված են այս բառերը)²³ երկրի հարությունը գոնե Բոցավառ Սրտի երգիչը փառաբանելու է կամ ցանկանալու է փառաբանել լուսե, հրկեզ երգով: Նաիրյան հրկեզ հոգու գովքը, լուսեղ Նաիրիի հարությունը վայել է երգել նույնպիսի երգով, ինչպիսին լույս Քրիստոսինը (վարդինը):

Բսկ Նաիրիի հարությանը, ի հեճուկա ավերի, ավարի, դառն ու թունոտ խոհերի, Տերյանը հավատում է սրտով-հոգով, քանզի զգում է իր հոգում վառ այրումը Նաիրյան հոգու անմար, մշտաբորբոք հրի:

Խոհերըս դառն են. դեռ, խոց,
Բայց վառ է սրտիս մթնում
Անմար մի, բորբոք մի բոց:

Երկի՛ր իմ աղետավոր,
Ասում եմ՝ տոկա՛ համար.
Փալու է հարության օր (2, 69):

Սակայն դեռ ավերում է ու մահ... Վարդավառի վառ վարդերի փոխարեն արնոտ ու բորբ վարդեր-վերքեր են, վարդագույն հրավառ ճաճանչի փոխարեն՝ խենթացնող որքանության արյուն... Եվ երգն էլ՝ բանաստեղծության վերջին հատվածը դեռ ողբ է: Բանաստեղծն այստեղ միայն պատմում – կենդանագրում է

²² Իբրև քրիստոնեական տոն՝ Վարդավառը հայոց մեջ Քրիստոսի այլակերպության-պայծառակերպությանն է նվիրվում. «... Յայտ է եւս զի Վարդավառն՝ այժմ տոն Այլակերպութեան Քրիստոսի...» (Ղ. Ա լ ի 2 ա ն. Հին հուատք կամ հեթանոսական կրոնք հայոց. Ծենեսիկ-Ս. Ղազար, 1895, էջ 305): Քրիստոս-Վարդի պայծառակերպությանն է նվիրված նաև Նարեկացու «Վարդավառին» տաղը, որի հետ բացահայտ-ակնառու են Տերյանի այս բանաստեղծության աղերսները՝ ընդհուպ մինչև վ-ի, ր-ո-ի բաղաձայնությո՛ւն:

²³ ԳԱԹ, Վ. Տերյանի ֆ., № 69, էջ 2:

իր երկրի հոգեվարքը և ողբում մանկանց կոտորածը, կոտորածը կորյունների՝ մանուկ Քրիստոսների. և՛ այս բանաստեղծության, և՛ շարքի խորհրդանիշները մտածել են տալիս, որ «կորյուն»-ը սերում է Քրիստոսի խորհրդանիշներից այս մեկից. «...Ահա հաղթեց առյուծը, որ Հուդայի ցեղից է, Դավթի արմատից...» (Հայտն. 5.5)²⁴:

Վարդը որպես Նահիրի գեղեցկության ճշմարիտ խորհրդանիշ նույն հուրկրակ-բոց-սիրտն է. «Միրտըդ հուրհուր – վարդըդ վառման պահի՛ր վառ...» (1, 218), «Դողում է սիրտըս նորբաց, Նորբաց մի հուրվարդի պես...» (1, 215), «Հուր ես հագել հրեղենըդ, Ալվարդըդ՝ կարմիր կրակ...» (1, 221), «Հրով արթնացած սիրտըս, Միրտըս բացված հրավարդ...» (1, 224)... Ինքն էլ երկիմաստ՝ ներհակությունների՝ «դառն ու անուշի» միություն – անուշաբույր, չքնաղ գեղեցկությամբ ծաղիկ և սուր, ծակող-արյունող փշեր... Ուրեմն՝ նաև վերքեր. «Վերքեր-վարդեր արնոտ ու բորբ...» (1, 248), «Այս գիշեր իմ սրտում, այս գիշեր, Վարդեր են բացվում – վերքեր ի...» (2, 67), «Վարդեր են անվերջ բացվում, Վարդեր ձյունի վրրա» (2, 64):

Որքան էլ գորեղ է Տերյանի՝ Նահիրի հարության հավատը, ցավատանջ մտքերը, խոհերը և ահավոր մտապատկերները, մղձավանջային տեսիլներն ի վերջո անխուսափելի են դարձնում ամենասարսափելի հարցը.

Մի՞ թե վերջին պոետն եմ ես,
Վերջին երգիչն իմ երկրի.
Մահն է արդյոք, թե նի՞նջը քեզ
Պատել, պայծառ Նահիրի (1, 249):

Ըստ Պ. Մակինցյանի ծանոթության, «Այս ոտանավորը, առաջինը՝ Երկիր Նահիրի» շարքից, գրված է 1913 թ. ամառը.²⁵: Եվ Տերյանի վկայությամբ «Մի թե վերջին պոետն եմ ես, վերջին երգիչն իմ երկրի» հարցը անդրադարձնում է հայրենիքի հոգևոր ապագայի ողբերգական անորոշությունը, հայրենիքի հոգևոր մահվան ավելի քան որոշակի տագնապները և իր խոսքերով՝ իր մեջ այսպես ձևավորված «Արդյոք սա մի կուլտուրական պատմաշրջանի՞ վերջն է, թե մի ամբողջ կուլտուրայի» (4, 53) հարցն է:

Մինչդեռ շարքում, մանավանդ «Վարդավառի վարդերը վառ...» բանաստեղծությունից հետո միայն հոգևոր մահվան մորմոքող տագնապների անդրադարձ չէ «Մի թե վերջին պոետն եմ ես»-ը: 1913-ից հետո եղել էր 1915... Եղեռնից սկսած հայ ժողովրդի ֆիզիկական բնաջնջման, ֆիզիկական մահվան ուրվականը սահմնեցուցիչ իրական, հստակ կերպարանք է առնում: Այլևս պարզ էր, որ աշխարհի «քաղաքակիրթ-քրիստոնյա» հանրության տերերը կայացրել են հայ ժո-

²⁴ «Յուդայի ցեղն էրող առիւծը» (Յայտ. 5.5), Քրիստոսն է, որ ելավ Յուդայի ցեղն և Դավթի տունէն, և յաղթեց մահու, աշխարհի և սատանային» (Բառարան Սուրբ գրոց, էջ 49): Նարեկացու «Տաղ վերացման խաչին» բանաստեղծության մեջ ևս Քրիստոսը ներկայանում է իր այս խորհրդանիշով (Տե՛ս և ի՛նչ էլ և՛ ց ի՛նչ. Տաղեր. Երևան, 1957, էջ 88):

²⁵ Վ. Տ ե ը յ ա ն. Երկերի ժողովածու. հ. 3, Կ. Պոլիս, 1923, էջ 287:

դովրդի բնաջնջման-խաչելության վճիռը... Այլևս «Մահն է արդյոք, թե նի՞նջը քեզ պատել, պայծառ Նաիրի» հարցն ուղղակի իմաստով է հնչում, և դրամատիկ մե-նախոսություն-երկխոսությունն այլևս ողբախառն աղոթք է²⁶:

Բայց ինչու՞ է այդքան ցավատանջ և սարսափելի՝

*Մի թե վերջին պոետն եմ ես,
Վերջին երգիչն իմ երկրի.*

հարցը: Պոետ, երգիչ՝ բանաստեղծ, այսինքն՝ խոսքի արարիչ: «Խոսքը կենդանի շունչ է համարվում,– ասում էր Տերյանը,– ոգի, գորություն կախարդական» (3, 83): Ուրեմն, նույն ինքը Բանն է: Եվ՞ ի սկզբանե էր Բանը և Բանը Աստված էր... Նաիրյան բանաստեղծը, ըստ Տերյանի, փաստորեն ոչ այլ ինչ է, եթե ոչ Նաիրի աստծո շունչն ու ոգին խոսքի վերածողը՝ մարմնացյալ Բանը: Այսու՝ վերջին պոետ-երգիչ կնշանակի պայծառ, լուսեղ Նաիրիի չգոյություն: Ասել է՝ Լույսի և Բանի չգոյություն...

Եվ այս ահռելի կորստի սարսափը բանաստեղծի կյանքը վերածում է աղոթքի ու այրումի:

*Վտարանդի, երկրում աղոտ,
Լուսն ղ, քեզ եմ երազում,
Եվ հնչում է, որպես աղոթք
Արքայական քո լեզուն (1,249):*

Աղոտ, խավար, անարեգ երկրում նաիրյան բանաստեղծի՝ լուսեղ Նաիրիի կարոտն ու երազը փոխակերպվում են աղոթքի. նաիրյան արքայական-աստվա-ծային լեզվով արտասանված, հոգում ծնված խոսքերը, մտքերը բոլոր աղոթքի են վերածում, աղոթքի արժեք են ստանում, սրբազնանում: Նաիրյան «սուրբ խոսքի» հնչումը Նաիրի-լույսի-հրի յուրօրինակ ճաճանչում-շողարձակում, հրահրում է հիմա նման հատկանիշներով.

*Հնչում է միշտ խոր ու պայծառ,
Եվ խոցում է և այրում... (1,249):*

Թափանցում-անցնում է լույս տենչացող, լույսով ապրող-լինելի հոգու խորքե-րը, լուսավորում -ամենամութ խորշերը՝ տալով կենսական հուր, բայց և խոցում անողորմ նույն ուժգնությամբ ու խորությամբ, ցավի անբաժան կրկնակի հրերով: Եվ ճակատագրական է հարցը.

Արդյոք բոցե վարդե՞ ընդ են վառ,

²⁶ Միրելի, կարոտ ու երազ ննջած՝ ննջեցյալ Նաիրիի մտապատկերներից մի այլ դեպքում ձայնագրվում-շարժանկարվում է «Երկիր Նաիրի, երազ հեռավոր» հիբրավի դասական ողբասացությունը:

Թե՞ վերքերն իմ հրահրուն... (1,249):

Ի վերջո ի՞նչն է առավել գորեղ, նույնակունք հրերից ո՞րը... Նաիրիի հրի կենսապարզ-արարի չ՞ սկիզբը կհաղթի, թե մոխրացնող-ավերող դր – դրանից է կախված Նաիրիի ճակատագիրը:

Կրկնակի հրերի միջից ժայթքում է բանաստեղծի աղոթք-հորդորը, պաղատանք-կոչը ցնորք՝ երազելի Նաիրիին.

*Ահով ահա կանչում եմ քեզ,
Յուլա՛, ցնորք Նաիրի.–
Մի թե վերջին պոետն եմ ես,
Վերջին երգիչն իմ երկրի... (1,249):*

Ժայթքում է՝ հրավառ խանդով աղերսել-պահանջելով ճաճանչել-պայծառակերպվել՝ չթողնելով որևէ տագնապ, մահվան տեսիլ և չարագուշակ հարց: Պայծառակերպվել, ինչպես պայծառակերպվեց լույս-Քրիստոսը²⁷՝ վկայելու յուր աստվածությունը²⁸:

Նաիրիի էության ամենահարազատ, ամենասիրելի այլակերպությունն է մայրը: Նաիրիի շատ հատկանիշներ կրկնվում են մոր դիմանկարներում՝ հավաստելով այս երկուսի հարազատության, համասեռության ոչ մտացածին լինելը: Տերյանի մայրն ու հայրենիքը փոխներթափանցված են, ասես միաձուլված: Դրանից է նաև, որ Նաիրին այնքան քնքուշ է, այնքան քաղցր ու անուշ, որքան լինում է միայն մայրը հատկապես և առավելաբար մայրական սիրուց, փաղաքշանքից, զգվանքից վաղ զրկված և աշխարհի չարն ու բարին տեսած-ճաշակած մարդու համար: Մայրն էլ ֆիզիկապես հեռու, բաժան, բայց բանաստեղծի էության անտրոհելի կենսական մասն է: Եվ լուսավոր թախիժն է հիմնական ֆոնը մորը նվիրված բանաստեղծությունների, որոնցից շատերը և մասնավորապես «Երկիր Նաիրի» շարքում ընդգրկվածները («Կարծես թե դարձել եմ ես տուն», «Այստեղ է լացել իմ մայրը», «Հիշում եմ ինչպես այն ուշ») տունդարձի տեսիլներ են: Շարքում մայրը աստվածային էություն է, մի իսկական հողեղեն աստվածուհի՝ աստվածային-իդեալական սիրո, գթառատության առաջին և միակ իրական, փաստարկների, սպացույցների կարիք չունեցող օրինակը:

Բանաստեղծը, սակայն, սրբապատկերի չի վերածում մորը, թեպետ, ըստ ամենայնի, սրբացնում է՝ «իմ անգին», «քաղցր մայր» և «իմ սիրող, իմ գթոտ» (2,60) «այնպես բարի և այնքան սուրբ» (2,179):

²⁷ «... Յիսուս իր հետ վերցրեց Պետրոսին, Յակոբոսին և նրա եղբորը՝ Յովհաննէսին և նրանց առաջ պայծառակերպուեց. և նրա դէմքը փայլեց ինչպես արեգակը. և նրա զգեստները դարձան սպիտակ ինչպես լոյսը...» (Մատթ.17. 1-3) (ընդգծումը մերն է.– Մ. Ս.):

²⁸ Պայծառակերպությամբ Քրիստոսի երեք աշակերտներին հայտնվում է Հիսուսի խոր ինքնությունը (տե՛ս Հ ա յ Ր Մ ի շ է Լ Ք Ե ն Է Լ. նշվ. աշխ., էջ 136). պայծառակերպության գլխավոր նպատակն էր վկայել Քրիստոսի փրկչությունը և աստվածությունը (տե՛ս Բառարան Սուրբ գրոց, էջ 33-34):

Մայր-հայրենիք համագոյությունից և հայրենիք-Քրիստոս նույնականությունից ծնվում-հառնում է Տիրամայր-Նաիրի կոթողային և ըստ էության բացառիկ կերպարը.

*Ինչպե՞ս չըսիրեմ, երկիր իմ կիզված,
Պարզված վերըստին սրերին սուրսայր.
Ինչպե՞ս չըսիրեմ – հեզությանը լցված
Դու յոթնապատիկ խոցված Տիրամայր (1,251):*

Տիրամայրը համաքրիստոնեական մշակույթի ամենաքնքուշ սիրո, ամենասնկեղծ և սրտաբուխ երկրպագության ու խորին ակնածանքի արժանացած կերպարն է: Հայոց մշակույթը ևս, ի մասնավորի բանաստեղծությունը, Նարեկացուց մինչև Չարենց, Սևակ Աստվածամորը հաստատել է որպես կատարյալ, անըստցուտ էակ, կնոջ մարդկային իդեալ: Ուրեմն և Տիրամոր հանդեպ սերն այնքան բնական-օրինակալի է, որ հիմնավորում չի պարտադրում, հայցում, մինչև իսկ չի ենթադրում:

Տերյանի Տիրամայրը իր երկիրն է, ուստի բանաստեղծը ոչ թե իմաստաբանում, հիմնավորում է առ Տիրամայրը իր սերը, նշում այդ սիրո ակունքները, այլ վկայում է չսիրելու անկարելիությունը, անհնարինությունը: «Ինչպե՞ս չըսիրեմ»-ի կամա թե ակամա արձագանք «ինչու՞»-ն անմիջապես ոչ միայն ավելորդ, այլև մի տեսակ անհեթեթ և նույնիսկ սրբապիղծ է թվում հաջորդող տողերից հառնող հիրավի բացառիկ – յոթնապատիկ սրբության վերաբերյալ:

Բանաստեղծության առաջին քառատողում Տերյանը քանդակում է գերտառապանքի, գերչարչարանքի մատնված հարազատ ժողովրդին. այս տողերում իսկապես խտացած է առավելագույն հնարավոր, գերադրական մարդկային տառապանք, որ բանաստեղծի աչքի առաջ կրում է իր հեզ, բարի Մեծ մայրը՝ Հայրենիքը. ֆիզիկական լլկանքները (կիզված-վառված բավական չէ, այլև վերստին-նորից, որերորդ անգամ «պարզված սուրսայր սրերին») բազմապատկվում են Նաիրի-Տիրամոր հոգեկան-հոգևոր յոթնապատիկ խոց-վերքերով, որ կսկծում են ինչպես Հիսուս որդու խաչելությունից Տիրամոր հոգում բացված յոթ վերքը:

*Որքան որ ելան արյունիդ ազահ
Դու կամավոր գոհ – բոլորը տվիր.
Դու հավետ եղար անարատ վրկա –
Չարերի կոխան, խաչված իմ երկիր (1, 251):*

«Երկիր Նաիրի» շարքի գրեթե բոլոր համադրումները՝ մայր-հայրենիք, մայր-որդի, հայրենիք-որդի, հայրենիք-Քրիստոս, որդի-Քրիստոս խաչվում են այս բանաստեղծության տարողությամբ: Նաիրի-Տիրամայրը ներկայանում է որդի Քրիստոսի հատկանիշներով, որին և «վերագրվում» է Հիսուսի ողջակիզումն ու նահատակությունը. չէ՞ որ ուղղակիորեն Տիրամայրը ո՛չ կամավոր գոհ է, ո՛չ վկա-նահատակ, ո՛չ խաչված: Սակայն սա փոխաբերություն չէ: Եվ հենց դա է Տերյանի Տիրամայր-Նաիրիի բացառիկությունը: Տիրամայրը և Քրիստոս որդին ա-

ռանձին գոյություններ են. առանձին էություններ, այնինչ Նաիրի-Տիրամայրը և Նաիրի-որդին նույնական են, համագոյություն: Ուստի ինքն է հենց՝ հեզ Տիրամայրը, թե՛ խաչվող, թե՛ կամավոր գոհ, թե՛ անարատ վկա... Նաիրիին Քրիստոսի առաքելության իրագործողն է: Նաիրիի գոհաբերություն-նահատակությունը իր ճշմարիտ էության, հոգևոր-բանական բնատուր-աստվածատուր կերտվածքի հաստատման, հարատև լինելության կամք է, ընթացք, կենսակերպ է, ինչն առանձնակի շեշտում են «վերստին», «որքան որ», «հավետ» բառակապակցությունները: Եվ նրա արքայական-աստվածային վեհությունից, հոգու հսկայական գանձից, ըստ բանաստեղծի մտահղացման, նշանախեց իսկ չի պակասում.

*Հրկեզ քո հոգին, որպես առատ խունկ,
Աշխարհի համար պարզեցիր անպարտ,
Հեզ ընդունեցիր երդում ու երկունք,
Դու արքայաբար վեհ ու անհպարտ (1, 251):*

Այդպես անգթաբար իրեն չարաչար տանջող, սուրսայր սրերին պարզած աշխարհին Նաիրին անհատույց, լիաբուռ տվել, պարզել է հիրավի խունկի պես հոգին՝ մաքրամաքուր ու բարձր մշակույթը. ասել կուզի՝ այսքան էլ անսպառ քրիստոնեաբարո մարդկային էություն... Խունկը քրիստոնեական եկեղեցու կարևոր պարագաներից է, և ինչպես եկեղեցում ամեն ինչ, այն ևս խորհուրդ կամ խորհուրդներ ունի²⁹:

Հայտնապես նման խորհուրդներ ունեն «Հրկեզ քո հոգին, որպես առատ խունկ, Աշխարհի համար պարզեցիր անպարտ...» տողերը: Տերյանի Նաիրին, Նաիրյան հոգին ինքը առաքինությունն է՝ հեզություն-անհպարտություն, իմաստնություն, ազնվություն, անպարտություն բաղադրությամբ՝ «քարերդ ազնիվ ու հին», «դու հպարտ չես», «տրտում ես դու և իմաստուն», «արքայաբար վեհ ու անհպարտ», «սիրեցի հեզ, անքեն հոգիդ», «հեզությամբ լցված», «անպարտ երկիրն»:

Հենց այդ հրկեզ, հրով մկրտված հոգին է, այդ աստվածային սերն ու գոհաբերություններն են Նաիրիի անկոտրում-անպարտելի կորովը, գորությունը և վերհատնումի, վերածնվելու ստույգ, անխաբ գրավականները, այլև անմահության, հավերժության առհավատյան: Այդ հավատով է բանաստեղծ որդին նոր հարության կոչով դիմում պաշտելի նաիրյան Հայրենիքին...

Ժամ է, ե՛լ նորից, իմ ծիրանավառ,

²⁹ Հայոց եկեղեցու որդեգրած մեկնություններից մեկն ավանդում է. «Խունկն առաքինությունն է: Ինչպես խունկն ունի քառամասնեայ բաղադրություն (ստաշի, եղունգ, քաղբան, կնդրուկ) (Ելք I, 34), այնպես էլ՝ առաքինությունը (խոհեմություն, արիություն, ողջախոհություն, արդարություն): Խունկը, մերձենալով հրին, բուրում է իր հոտը. նոյնպես էլ չորս առաքինություններով զարդարուած հոգին, մոտենալով ու հպուրելով աստուածային հրին, բուրում է երկնային կյանքի անուշահոտությամբ» (Գրիգոր Նյուսացի) («Երգ երգոց» հանդերձ մեկնությամբ նախնեաց, Երևան, 1993, էջ 22-23): Մյուս մեկնությունն ավելացնում է. «Խունկը նաև խորհրդանշում է մեղքերի՝ ապաշխարության բառությունը և հաշտությունն Աստծո հետ» (Գրիգոր Տաթևացի) (նույն տեղում):

*Ջրահավորվի՛ր խանդով խնդագին,
Վառի՛ր երկունքի գիշերում խավար
Հրով մկրտված նաիրյան հոգին... (1, 251):*

Որ ճակատագրական է Նաիրիին ուղղված կոչը, վկայում են հատկապես «Ժամ է»-ն, որ նշանակում է օրհաս, և «ե՛լ»-ը: Պարզաբանենք դարձյալ Տերյանի օգնությամբ:

Նամակներից մեկում կարդում ենք. «Տա՛սստված, որ ուժգին սիրեք, ում որ սիրում եք:

Միրուց լավ բան չկա:

Բսկ ո՞վ կձայնի մեզ, մեռածներիս՝ «ե՛լ ք»: Ո՞վ կասի մեզ՝ տրտումներիս ու միայնակներիս՝ հավատով ու տիրական՝ «սիրեցե՛ք և դուք կհաղթեք մահվան» (3, 319) (ընդգծումը մերն է.– Մ. Ս.):

Տերյանի մեջբերած խոսքերը Քրիստոսին են: Առաջինը միանշանակ հարության կոչ է, այդ խոսքով է Քրիստոսը հարություն տալիս մեռածներին³⁰:

Բսկ մի թե՛ իսկապես հայրենիքի ճշմարիտ հոգևոր քրիստոսակերպ զավակների ուժգին սիրով, աղոթք-կոչերով չէ, որ ամեն անգամ նորից հառնել-հարություն է առել Նաիրին...

Մահին, չարին ու խավարին դիմագրավելու, հաղթելու գրավականը արքայական ծիրանու վառվոռուն, ալ-բոսոր պայծառությունը չէ: Խնդագին-խանդավառ սերն է դրանց դեմ զրահը-վահանը.

*Չէ որ լուկ սերն է, սերն է վահան,
Եվ սիրտն է, սիրտն է սրտին ասպար... (2, 79):*

Եվ Նաիրյան հոգու հրավառումը, պայծառ այրումը, լույսի ճաճանչումն է կյանքն ու լինելությունը: Տերյանը համոզված էր և շարունակ կրկնում էր, որ Հայաստանը կվերածնվի, կապրի ու կհարատևի միայն ու միայն իր զավակների սիրով ու կամքով. «Կամենանք որ լինի և կլինի» (4, 201) և եթե ցանկանում է, եթե ինքն իրեն սիրում ու հավատում է:

Բնչ կերպարանքով էլ որ ներկայանում է Նաիրին, միննույնն է՝ սեր է, սիրո հուր, կենսական հուր: Եվ ասիա մայր-Տիրամայր-թագուհի Նաիրին ներկայանում է մի նոր՝ նաիրուհու հողեղեն-հրեղեն կերպարով ու կերպարանքով.

*Բարակիրան նաիրուհին ինձ ժպտաց,
Նաիրուհին տխուրայա և համեստ.
Այնպես վառ էր լեռնադստեր դեմքը բաց,
Նայվածն այնպես հրեղեն ու անարվեստ (1, 252):*

³⁰ Նոր Կտակարանում նկարագրված հարության երեք դեպքում էլ Քրիստոսը մեռածներին դիմում է նույն կոչով՝ «վեր կաց» (եյ). «Եվ բռնելով մանկան ձեռքից՝ ասաց նրան՝ Տայիթա՛, կումի՛, որ նշանակում է՝ «աղջի կ, վե՛ր կաց» (Մարկ. 5.41). «Վե՛ր կաց, կանգնի՛ր, ո՞վ մանուկ» (Ղուկ. 8.54). «Մոտենալով դագաղին դիպավ: Եվ նա ասաց. «Քե՛զ եմ ասում, ո՞վ պատանի, վե՛ր կաց» (Ղուկ. 7.14). «Բարձր ձայնով աղաղակեց և ասաց. «Ղագարո՛ւ ս, վե՛ր կաց, դու ըստ արի» (Հովհ. 11. 43):

Նախրական՝ աշխարհում ամենասրտամոտ, հոգեհարազատ գեղեցկության և մի ուրիշ ոգեղեն անբիծ սիրո խորհրդանիշ է նախրուհին: Սոսկ դյուրթիչ-հմայիչ կին չէ: Այլ կին, որի մեղմ ու թախծոտ ձայնում, մաքուր ու բուրյան շուրթերում, հրախանդ հայացքում, շարժումներում և վերջապես, խոնարհ հոգում մեղմ ու թաքուն «Նախրյանն է երգում»: Ասել է՝ բանաստեղծի հոգու երգը:

Նախրուհին անհունորեն հարազատ ու սիրելի է, քանզի իր ժպիտում, աչքերում, դիմագծերում, հայացքում Նախրին է, նախրյան լուսավոր թախիծն է, ժպտաթախիծ տխրությունը և նախրյան արևը-հուրը՝ կյանքի-սիրո սրբազան հուրը – ակնաղբյուրը:

Նախրուհու հրեղեն-հրախանդ նայվածքը անդրադարձնում, փոխանակելով փոխանցում է այդ սրբազան հուրը՝ փրկելով բանաստեղծի հոգին հյուսիսյան հեռուններում ու ցրտում մարելուց, հակառակը՝ բորբոքում-հրահրում է հոգու արարիչ հուրը-լույսը, որից և ծնվում է երգը, որ նույն հրի՝ նախրյան արևի երկրպագությունն է: Հար և նման արևապաշտ իր նախնիների՝ բակունցյան Արևորդիների արևերգությանը, որ ըստ էության փոխել է ձևեր, անուններ, բայց մշտապես մնացել է արևապաշտ-բնապաշտ-մարդապաշտ, քանզի արևը-լույսը-սերը նույնացվել-փոխադարձել են մարդկային սրտին. «Միրտը արև է, իսկ արևը բացվում է բոլորի համար, որովհետև մինչև իսկ մերոնք հնում ասել են «արեգակն արդար»³¹, – հնօրյա նախնիներին վկայակոչելով՝ հաստատում է Տերյանը:

Հաստատում նաև նախրյան ողջակիզված միլիոնավոր զավակներից ստալինյան առաջին զոհերից անվեհեր Ստեփան Շահումյանի հիշատակին նվիրած այս բանաստեղծությամբ, որ հնչում է որպես աշխարհի բոլոր ծագերում գտնվող հայ ժողովրդի զավակներին հասցեագրված հեթանոսա-անտիկյան-քրիստոնեական հիմներգություն:

*Միրտը, որպես վառ ատրուշան, պահիր վառ,
Միրտը հրկեզ, մթնում դաժան, պահիր վառ:*

*...Որպես խարույկ ելնող վկա, պահիր վառ,
Արևի պես սիրտը վառման պահիր վառ... (1,218):*

ХРИСТИАНО-ЯЗЫЧЕСКИЕ СИМВОЛЫ СТИХОТВОРНОГО ЦИКЛА

“СТРАНА НАИРИ” В. ТЕРЬЯНА

МАРИНЕ САРКИСЯН

Р е з ю м е

Символ Наири Ваана Терьяна – это новая теория, новая эстетика Родины, но по сути – человека, мира – в армянской литературе и культуре. В статье аналитическим-семасиоло-

³¹ ԳԱԹ, Հովհ. Թումանյանի ֆ. (լրաց.) -136: Նամակը, որից քաղված են այս տողերը, կրճատումներով (ներառյալ մեջբերված հատվածը) տպագրված է Վ. Տերյանի «Երկերի ժողովածուում» (հ. 4, էջ 175-177):

гическим исследованием на комплексной основе жизнеощущения и мировоззрения поэта представляется цикл “Страна Наири”. Сделана также попытка расшифровать, истолковать таинства системы христиано-языческих символов цикла.

CHRISTIAN-PAGAN SYMBOLS OF THE SERIES «NAIRI COUNTRY»
BY V. TERYAN

MARINE SARGSYAN

S u m m a r y

The Nairi symbol of Vahan Teryan was a new theory, a new aesthetics of the Country, but essentially of a human being, the world—in the Armenian literature and culture. The series «Nairi Country» is represented by analytical-semasiological research on the complex basis of poet's vital sensation and world outlook. An attempt is also made to decipher, to interpret system's mystery, Christian-pagan symbols of the series.